ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/47

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2017թ. թիվ 03/26-3/16519-17 գրությամբ «Շահար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.09.2017թ. թիվ 01/61-17792 գրության հիման վրա, 07.09.2017թ. թիվ 03/26-3/16519-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Շահար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից կողմից ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 01.09.2017թ. թիվ 01/61-17792 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Շահար» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ճանաչվել է գնման ընթացակարգի ընտրված մասնակից: Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անգործության ավարտից հետո Ընկերությանը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ: Սահմանված ժամկետում (10 աշխատանքային օր) մասնակիցը չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Շահար» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Գագիկ Հուրոյանը:

3. <u>«Շահար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Խորհուրդը դիմել է «Շահար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.09.2017թ. Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Շահար» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/47 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2017թ. թիվ 03/26-3/16519-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 01.09.2017թ. թիվ 01/61-17792 գրությունը, «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝

Հանձնաժողով) 31.07.2017թ. նիստի թիվ 2 և 04.08.2017թ. թիվ 3 արձանագրությունները, «Շահար» ՍՊԸ-ին Պատվիրատուի կողմից 15.08.2017թ. ուղարկված՝ պայմանագիր կնքելու և պայմանագրի ապահովում ներկայացնելու մասին ծանուցումը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

Հանձնաժողովը՝

- 31.07.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 5.1 կետով Ընկերությանը ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:
- 04.08.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով որոշել է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Շահար» ՍՊԸ-ին:

Պատվիրատուն 15.08.2017թ. պայմանագիր կնքելու մասին ծանուցմամբ, խնդրել է նույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ուղղված գրությամբ Երևանի քաղաքապետարան ներկայացնել Ընկերության կողմից կնքված պայմանագրի երկուական օրինակները և պայմանագրի ապահովումն, ինչպես նաև armeps.am տիրույթում ընդունել պայմանագրի շնորհումը, տեղեկացնելով, որ նշված ժամկետում կնքված պայմանագրի երկուական օրինակները և պայմանագրի ապահովումն չներկայացնելու դեպքում, Ընկերությունը կզրկվի պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:
- 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումն, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Հրավերի 9.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում

պայմանագրի ապահովումն, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Շահար» ՍՊԸ-ն՝ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելով և պայմանագրի ապահովումը պատվիրատուին չներկայացնելով, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և Հրավերի 9.5 կետով սահմանված պահանջներն, ինչի արդյունքում զրկվել է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, 6-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2017թ. թիվ 03/26-3/16519-17 գրությամբ «Շահար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Շահար» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ